

1. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել մրցույթին

Սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ Converse Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերով կատարելով առնվազն 500,000 դրամի հանրագումարային գործարք՝ կստանաք հնարավորություն մասնակցելու խաղարկության և հաղթելու արժեքավոր մրցանակներ:

2. Մասնակցելով խաղարկությանը՝ ի՞նչ մրցանակներ կարող եմ հաղթել

Մրցանակները հետևյալն են՝

- Ուղևորություն դեպի Abu Dhabi Ferrari world՝ նախատեսված մինչև 4 անձի (ամուսիններ և 2 երեխա) համար
- 5 երկկողմանի թռիչք օդանավակայանի VIP սրահով՝ նախատեսված 2 անձի համար
- 30 կտրոն օդանավակայանի Fast Track-ից օգտվելու համար

3. Ո՞վ կարող է դառնալ մրցույթի մասնակից

Մրցույթին կարող են մասնակցել Բանկի հաճախորդ հանդիսացող 18 տարին լրացած ֆիզիկական անձինք, << ռեզիդենտ քաղաքացիները՝ բացառությամբ Կոնվերս Բանկի աշխատակիցների:

4. Ինչպե՞ս եմ ստանալու անհատական կոդը

Մրցույթի մասնակիցներն անհատական կոդը ստանալու են Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեին կամ հեռախոսահամարին:

5. Կարո՞ղ եմ ստանալ մեկից ավելի անհատական կոդ

Մասնակիցը՝ իր Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերով կատարած հանրագումարային յուրաքանչյուր 500,000 << դրամ գործարքի համար ստանում է 1 անհատական կոդ: Այսպիսով մասնակիցը չունի սահմանափակում կոդերի քանակության մասով:

6. Կարո՞ղ եմ Կոնվերս բանկի Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) տարբեր քարտերով կատարել գործարքներ և մասնակցել մրցույթին:

Անկախ Visa Premium (Visa Platinum, Visa Signature, Visa Infinite) քարտերի քանակից հաշվարկը կատարվելու է հանրագումարային:

7. Ինչպե՞ս և ե՞րբ են ամփոփվելու մրցույթի արդյունքները

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակման միջոցով՝ 2023թ-ի նոյեմբերի 24-ին:

8. Ինչպե՞ս են որոշվելու հաղթողները

Մրցույթում հաղթողները կորոշվեն Բանկի ֆեյսբուքյան էջում կայանալիք live խաղարկության ժամանակ՝ հաճախորդներին տրված անհատական կոդերից պատահականության սկզբունքով ընտրության միջոցով:

9. Եթե հնարավորություն չունենամ հետևելու ուղիղ հեռարձակմանը, ինչպե՞ս եմ տեղեկանալու՝ հաղթել եմ, թե ոչ

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կիրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2023թ նոյեմբերի 27-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59:

10. Կարո՞ղ եմ մի քանի մրցանակ ստանալ

Մասնակիցները կախված անհատական կոդերի քանակից (եթե հաճախորդը ունի 2 և ավելի կոդ) կարող է հաղթել մի քանի մրցանակ:

11. Կարո՞ղ եմ մրցանակը փոխարինել համարժեք գումարով

Հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի տրամադրվում, մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

12. Ինչպե՞ս եմ ստանալու մրցանակը

Fast Track կտրոնները և VIP lounge-ի մուտքի կտրոնները կստանաք էլեկտրոնային պրոմոկոդերի միջոցով, իսկ գլխավոր մրցանակի հանձման օրվա և վայրի մասին հաղթողը կտեղեկացվի մրցույթի ամփոփումից հետո:

13. Որո՞նք են Visa Premium քարտատեսակները

1. Visa Platinum
2. Visa Signature
3. Visa Infinite

14. Ինչպե՞ս կապ հաստատել Բանկի հետ

Բանկի հետ կարող եք հաղորդակցվել հետևյալ կապուղիներով.

- Հեռախոսահամար՝ +374 10 511211
- E-mail՝ info@conversebank.am
- WhatsApp՝ +374 95 511211
- Բանկի պաշտոնական սոցիալական էջեր

15. Ինչու՞ է արշավը միայն քարտապանների համար:

Այս պահին առկա է արշավ՝ Act2Win, և առաջիկայում սպասվում է նոր և հետաքրքիր արշավներ Բանկի բոլոր հաճախորդների համար: Հետևե՛ք մեր սոցիալական էջերին և եղեք տեղեկացված:

Եվս մեկ անգամ հիշեցնում ենք. պաշտպանե՛ք Ձեր բանկային տվյալները զեղծարարներից. մի՛ տրամադրեք Ձեր քարտի CVV կոդը, SMS-ով ուղարկվող մեկանգամյա օգտագործման (OTP) կոդը, Converse Mobile հավելվածի PIN կոդը, ինչպես նաև ցանկացած գործարքի մանրամասները:

Հարցերի կամ կասկածների դեպքում դիմե՛ք՝ ՄԻԱՅՆ մեր պաշտոնական էջին անձնական նամակ գրելով: Կապի մեջ լինենք: